ՍԱՍՈՒՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿ» ԵՎ «ԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վերջին տասնամյակներում շրջանառության մեջ են դրվել և լայնորեն քննարկվում են «կյանքի որակ» և «կայուն հասարակական զարգացում» («Sustainable Human Development») հասկացությունները, սակայն դեռևս միասնական կարծիք չկա նրանց իմաստային բովանդակության և փոխառնչությունների մասին: Երկուսի ծնունդն էլ կապված է բնություն-մարդ-հասարակություն կապերի և փոխհարաբերությունների զարգացման նոր, ավելի բարդ փուլի անցման հետ: Ի՞նչ սկզբունքային հարցեր են լուծում նոր հասկացությունները, ինչպե՞ս են լրացնում իրար, սկզբունքային ինչպիսի՞ նմանություններ և տարբերություններ ունեն: Փորձենք պարզաբանել:

«Կյանքի որակ» հասկացությունը

«Կյանքի որակ» հասկացությունը առաջին անգամ օգտագործել է տնտեսագետ Ջ.Կ.Գալբրայթի «The Affluent Societi» (Boston: Houghton Mifflin Company, 1958) աշխատության մեջ: Նրա ծնունդը կապված է հասարակության զարգացման սկզբունքների վերաարժեքավորման հետ. կյանքի պայմանների քանակական գնահատումը, որը ամփոփվում էր «կյանքի մակարդակ» հասկացության մեջ՝ բավարար չէր, ուստի գիտական շրջանառության մեջ մտավ «կյանքի որակ» հասկացությունը: Մինչև այժմ էլ այն միանշանակ չի մեկնաբանվում, առկա են կյանքի որակի բազմատարբերակային բնորոշումներ:

Ընդհանրացնելով դրանք, կարելի է ասել, որ կյանքի որակը մարդկանց ինքնապահպանման, ինքնազարգացման, ինքնաարտահայտման, ինքնահաստատման և ինքնակազմակերպման պահանջմունքների բավարարման որակական մակարդակը, գործունեության բովանդակությունը, որակական որոշակիությունն արտահայտող հասկացություն է; հասարակության բարեկեցության չափանիշ, մարդու կյանքի պայմանների և այդ պայմաններով նրա սուբյեկտիվ բավարարվածության սինթետիկ ցուցանիշ, բարեկեցության և հարստության հասած հասարակության բնութագիր, սոցիալական նվաճման, տնտեսական, սոցիալ-մշակութային, տեխնոլոգիական, բնապահպանական քաղաքականության վերլուծության չափանիշ, հասարակության սոցիալ-քաղաքական նպատակների բնութագիր [1էջ 39]:

«Կայուն հասարակական զարգացում» հասկացությունը

«Կայուն հասարակական զարգացում» հասկացության մասին նույնպես միակարծիք չեն: Նշենք մի քանի առավել ընդունված բնորոշումներ:

1. Ըստ ՄԱԿ-ի Հանձնաժողովի զեկույցի՝ «կայուն զարգացումը առաջընթացի մի մոդել է, որի ընթացքում ձեռք է բերվում ներկա սերնդի կյանքի պահանջմունքների բավարարումը՝ առանց ապագա սերունդներին այդպիսի հնարավորություններից զրկելու: Լայն իմաստով կայուն զարգացման ռազմավարությունն ուղղված է մարդկանց միջև և հասարակության ու բնության միջև ներդաշնակության հաստատմանը» [4]:

2. Ըստ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի մարդկային զարգացման հաշվետվության՝ «կայուն հասարակական զարգացումը դա բնության, մարդկանց, նրանց բարեկեցության զարգացումն է: Նրա բարձրագույն գերակայությունը համարվում է աղքատության նվազեցումը, արդյունավետ զբաղվածությունը, սոցիալական ինտեգրացիան և շրջակա միջավայրի վերականգնումը: Կայուն հասարակական զարգացումը հենվում է արդարության վրա՝ ինչպես մեկ, այնպես էլ մի քանի սերունդների՝ հնարավորություն տալով բոլոր սերունդներին՝ ներկա և ապագա՝ լավագույն կերպով օգտագործել իրենց պոտենցիալ հնարավորությունները կյանքի բոլոր

բնագավառներում. տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական» [3էջ 7]:

3. Ըստ Կ.Ս.Դանիելյանի՝ «կայուն հասարակական զարգացումը այն զարգացումն է, որը երաշխավորում է ներկա և ապագա սերունդների ներկայացուցիչներին առավելագույնս հնարավոր հավասար ելակետային պայմաններ՝ իրենց ընդունակությունները դրսևորելու և կենսական պահանջմունքները բավարարելու համար: Հասարակության կայուն զարգացումը հենվում է մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող ժողովրդավարական հասարակությունում էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքների հետ զուգակցվող տնտեսության վրա» [3էջ 11]:

Ի՞նչ ընդհանուր կողմեր ունեն «կայուն հասարակական զարգացում» հասկացության բնորոշումները և որո՞նք են դրանց գլխավոր տարբերությունները:

Բոլոր բնորոշումների առանցքն այն է, որ կայուն հասարակական զարգացումը առաջնային է համարում այն զարգացումը, որը ոչ միայն ներկա սերունդների համար է, այլ նաև ապագա, որը այդ սերունդների համար պահպանում է պահանջմունքների բավարարման, ընդունակությունների դրսևորման հնարավորությունները, զարգացում, որի դեպքում գերակայություն է համարվում առաջին հերթին էկոլոգիական անվտանգությունը և սոցիալական արդարությունը:

Առանձին բնորոշումներում նկատելի են առանձնահատուկ կողմեր, որոնք չկան բոլոր բնորոշումներում: Օրինակ. կայուն հասարակական զարգացման գլխավոր պայման է համարվում ժողովրդավարական քաղաքական ռեժիմը, որի պայմաններում միայն հնարավոր է ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը: Առանձնահատուկ կողմ է նաև այն, որ զարգացումը ուղղված է մարդկանց միջև, բնության ու հասարակության միջև ներդաշնակության հաստատմանը, որը բազմաբնույթ փոխհարաբերությունների նկատմամբ ուշադրություն է հրավիրում: Հաջորդ առանձնահատուկ կողմն այն է, որ գերակայությունների շարքում

առանձնանում են աղքատության նվազեցումը, սոցիալական ինտեգրացիան, արդյունավետ զբաղվածությունը:

Սակայն կարևոր հարց է այն, թե կայուն հասարակական զարգացումը ինչպիսի պրակտիկ հնարավորություններ, ինքնահաստատման և կայացման հնարավորություններ ունի, ինչքանով է այն իրատեսական:

Ըստ հեղինակների «կայուն հասարակական զարգացումը» առաջին հերթին նպատակ է, երաշխիքներ, իսկ երաշխավորել և նպատակին հասնել հնարավոր է միայն որոնողական և նորմատիվային կանխատեսագիտական մոտեցման դեպքում, որը կայուն հասարակական զարգացմանը վերաբերող աշխատություններում բացակայում է: Ցածր է մարդու նկատմամբ համակարգային մոտեցման մակարդակը, որն արտահայտվում է կամ առանց մարդու (հասարակության) պահանջմունքների համակարգի վրա հենվելով ինդիկատորների ընտրությամբ, կամ լավագույն դեպքում մարդու (հասարակության) պահանջմունքների տարբեր համակարգերի կիրառմամբ (որը գրեթե չի հանդիպում), ուստի և չեն կարող լինել պահանջմունքների հնարավորինս ամբողջական համակարգի բավարարման իրական հնարավորություններ, և չեն կարող լինել զարգացման երաշխիքներ: Այսինքն՝ այն առավելությունները, որ ի սկզբանե որդեգրել էր «կայուն հասարակական զարգացումը»՝ իրականում չկան, չկան զարգացման երաշխիքների գիտական հիմքերը:

Ինչպես մարդու (հասարակության) նկատմամբ համակարգային մոտեցման կիրառման, այնպես էլ զարգացման հնարավորությունների հարցը «կայուն հասարակական զարգացումը» փորձում է լուծել և դա առաջին հերթին արտահայտվում է նրա կողմից կյանքի որակին անդրադարձներում: Օրինակ. կայուն հասարակական զարգացման ռազմավարության սկզբունքների շարքում առաջին տեղում ամրագրված է քանակական ցուցանիշների նկատմամբ որակականի (կյանքի որակ) գերակայությունը [3էջ8]: Շատ գիտնականներ զարգացման նպատակ են տեսնում կյանքի որակի բարելավումը: Եվ վերջինս հաշվի առնելով առաջարկվում են կայուն հասարակական զարգացման ցուցանիշների ամենատարբեր վարիացիաներ. մանկական մահացության, կյանքի սպասվելիք տևողության և բնակչության

գրագիտության աստիճանի զուգորդումից մինչև Մարդկային ազատության համաթվի հետ Մարդկային զարգացման համաթվի զուգորդումը և բազմասպեկտ ցուցանիշների ամբողջ համակարգը [2էջ 43]:

Հետաքրքիր են «կայուն հասարակական զարգացում» հասկացության կատեգորիական համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները:

Հասկացությունը բաղկացած է երկու կարևոր բաղադրամասերից՝ «հասարակական զարգացում» հասկացությունը արտահայտում է մարդկային ռեսուրսների տնտեսական և սոցիալական զարգացումը, իսկ «կայուն զարգացումը» զարգացում է՝ հիմնված էկոլոգիական գերակայությունների վրա [7]:

Վերոհիշյալ հասկացությունները ունեն իրենց բաղադրիչները. «զարգացումը», որը «կայուն հասարակական զարգացում» հասկացության և նրա բաղադրիչների՝ «կայուն զարգացում» և «հասարակական զարգացում» հասկացությունների առանցքային հասկացությունն է, նշանակում է անշրջելի, նպատակաուղղված և օրինաչափ փոփոխություններ [6էջ 537]: Կայունություն նշանակում է մոտակա ապագայում զարգացման հեռանկարների պահպանում և ընդլայնում [5]: Ինչ վերաբերում է զարգացման հասարակական բնույթին, ապա այն ենթադրում է զարգացման նկատմամբ համակարգային մոտեցում, որը բխում է ամբողջ հասարակության (ինչպես նեղ այնպես էլ լայն իմաստով) շահերից:

«Կյանքի որակ» և «կայուն հասարակական զարգացում» հասկացությունների նմանությունները և տարբերությունները

Գիտական այս կամ այն պրոբլեմի լուծման գործում կարևոր է հասկացությունների նշանակությունը, ավանդը: Մասնավորապես հասարակական կյանքի բարելավման հիմնախնդրի գործում իրար լրացնող այս երկու հասկացությունների նմանությունների և տարբերությունների պարզաբանումը կնպաստի հասարակական կյանքի բարելավման հիմնախնդրի գործում նրանց յուրաքանչյուրի դերի մասին պատկերացումների հստակեցմանը:

Ասվածի հիման վրա կարելի է առանձնացնել այս երկու հասկացությունների նմանության հետևյալ կողմերը. երկու կատեգորիաներն էլ ուշադրության կենտրոնում են տարբեր գիտությունների, երկուսն էլ թերմշակ են մեթոդաբանական տեսանկյունից, երկուսի համար էլ բոլորի կողմից ընդունված սահմանում չկա, երկուսի հիմքում ընկած է շրջադարձը կյանքի արժեքների նոր պատկերացումներին, երկուսն էլ ամենահնարավոր արդյունքների հոմանիշ են, հասարակության սոցիալ-քաղաքական նպատակների բնութագիր, բնություն-մարդ փոխհարաբերությունների ներդաշնակության մոդել, ընդգրկում են մարդու գործունեության տարբեր ոլորտները, երկուսի համար էլ գերակայություն է համարվում էկոլոգիական անվտանգությունը, սոցիալական արդարությունը, արդյունավետ զբաղվածությունը, գործազրկության նվազեցումը, երկուսն էլ հիմքում դնում են տարբեր սերունդների զարգացման հնարավորությունների պահպանման խնդիրը, երկուսն էլ ունեն պահանջմունքների ունիվերսալություն, ցուցանիշների ընտրության ժամանակ շատ ասպեկտներում համընկնում են:

Կարելի է առանձնացնել այս երկու հասկացությունների առանցքային տարբերությունները:

«Զարգացում» հասկացության միջոցով «կայուն հասարակական զարգացումը» փորձում է ահազանգել մարդ-բնություն փոխհարաբերություն-ների հիմնախնդիրների լուծման գործում այդ հիմնախնդիրների դինամիկան գիտության կողմից ժամանակի մեջ տեսնելուանհրաժեշտությունը, նորմատիվային կանխատեսագիտական մոտեցման կիրառման անհրաժեշտությունը: Այս շեշտադրումը կյանքի որակի մոտ թույլ է:

Ի տարբերություն «կայուն հասարակական զարգացման», «կյանքի որակի» ցուցանիշների համակարգը ավելի ընդգրկուն է, բաղադրման, մանրամասնման աստիճանը ավելի խորը, որը մարդու (հասարակության) պահանջմունքների համակարգը ավելի լավ է արտահայտում, որոնց բավարարման խնդրի լուծմանն են ուղղված և կյանքի որակի, և կայուն հասարակական զարգացման գնահատականները:

«Կյանքի որակը» ընդգրկում է իրենց կյանքի նկատմամբ մարդկանց սուբյեկտիվ գնահատականները, որը չկա «կայուն հասարակական զարգացման» մոտ:

Վերոհիշյալ փաստարկները ենթադրում են «կյանքի որակ» և «կայուն հասարակական զարգացում» հասկացությունների բովանդակության համատեղելիությունը, շատ ասպեկտներում նմանությունը, ընդ որում նույն խնդիրների, նույն սկզբունքների և գերակայությունների պայմաններում գրեթե հավասարվում են «կյանքի որակ» և «կայուն հասարակական զարգացում» հասկացությունների նշանակությունը, համալիրային խնդիրների լուծման գուրծում դրանց մասնակցության հնարավորությունները:

«Կայուն հասարակական զարգացում» հասկացության սահմանումը

Ընդհանրացնելով «կայուն հասարակական զարգացում» հասկացության մասին պատկերացումները, միևնույն ժամանակ նպատակ ունենալով ցույց տալ «կյանքի որակ» և «կայուն հասարակական զարգացում» հասկացությունների ներթափանցելիությունը՝ փորձենք սահմանել այն:

Կայուն հասարակական զարգացումը՝ մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող ժողովրդավարական հասարակությունում էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքների հետ զուգակցվող տնտեսության վրա հենվող մարդկային ռեսուրսների տնտեսական և սոցիալական անշրջելի, նպատակաուղղված և օրինաչափ փոփոխություններն են, որոնք լուծելով ներկա և ապագա սերունդների ընդունակությունների դրսևորման և պահանջմունքների բավարարման պայմանների բարելավման խնդիրը՝ հանգում են կյանքի որակի բարելավման նպատակին:

Օգտագործված գրականություն

1. Սարիբեկյան Ս.Լ. Կյանքի որակը որպես աշխարհագրական հետազոտության առարկա, «Աշխարհագրություն 99», Եր., 1999:

2. Даниелян К. С., Индикаторы устойчивого развития. В кн.: К устойчивому развитию Армении. Том 1. Основопологающие материалы и опыт развитых стран. Ер., 1999.

3. Даниелян К. С., Концепция устойчивого развития: теория и практика. Ер., 1996.

4. Контюг В. А., Конференция ООН по окружающей среде и развитию (Рио-де-Жанейро, июнь 1992). Информационный обзор СОРАН. Новосибирск, 1992.

5. Красилов В. А., Охрана природы: принципы, проблемы, приоритеты. М., 1992.

6. "Философский энциклопедический словарь". Отв. Ред. С. С. Аверинцев, Э. А. Араб-Оглы, Л. Ф. Ильичев и др. М., 1989.

7. Banuri T., Hyden G., Jima C., Rivera M. Sustainable Human Development. From Concept to Operation. A Cuide for the Practitioner. UNDP. New-York, 1994.